Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
Գիտական խորհրդի 2022թ. դեկտեմբերի 29-ի
N1-12/22/8, 2025թ. փետրվարի 26- N1-02/25/1 որոշումներով:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Շուշիի տեխնոլոգիական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) տրամադրում է լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ՝ ուղղված հասարակության և Համալսարանի ուսանողության կարողությունների զարգացմանը:

Տրամադրվող լրացուցիչ ծառայությունների վերջնարդյունք է սպառողների կարիքների բավարարումը: Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ ստացողներ են Համալսարանի ուսումնառողները, դասավանդող կազմը, արտաքին շահակիցները:

Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման համար հիմք են ընդունվում արտաքին և ներքին նորմատիվային փաստաթղթերը՝ ուղղված լրացուցիչ ծառայությունների մատուցմանը:

Նպատակը

Սույն քաղաքականության նպատակն է հասարակությանը մատուցել որակյալ լրացուցիչ ծառայություններ, խթանել մասնագիտական կարողությունների ստեղծման գործընթացը, օժանդակել հասարակությանը և Համալսարանի ուսանողությանը մասնագիտական ուսուցման համակարգում:

Համալսարանում իրականացվող լրացուցիչ ծառայությունների հիմնական նպատակն է հասարակությանը տրամադրել ծառայություններ, ուղղված նրանց մասնագիտական որակների բարձրացմանը, աջակցությանը և մասնագիտական ոլորտում կարիքների բացահայտմանը:

Լրացուցիչ ծառայությունների հիմնական խնդիրներ են.

- հասարակությանը ծառայություններ մատուցելու կարողությամբ և մասնագիտական ու սոցիալական ոլորտներին իրազեկման ունակ անհատի ձևավորումը,
- հասարակության և համալսարանի ուսանողների կրթական կարիքները հաշվի առնող լրացուցիչ ծառայությունների ստացման հնարավորությունը,
- ուսումնառողների մոտ ժամանակակից կարողությունների մակարդակի ձևավորումը,
- ուսանողների շարժունության և աշխատաշուկա մուտք գործելու համար պայմանների ստեղծումը:

Գործընթացների իրականացման համար լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունները մատուցող կառուցվածքային ստորաբաժանումները և գործընթացների պատասխանատուները առաջնորդվում են

մշակված աշխատանքային պլաններով՝ հաշվի առնելով ծառայության ուղղվածությունը:

Համալսարանի լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունները

- Համալսարանի արտաքին կապերի բաժնի կազմակերպած օտար լեզվի դասընթացներ,
- Համալսարանի կարիերայի զարգացմանը և շարունակական կրթությանը ուղղված խորհրդատվություն, ՀՀ-ի տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպություններին, մասնավորապես գյուղատնտեսության, ջրային տնտեսության, շինարարության և անհատ տնտեսվարողներին խորհրդատվական ծառայությունների մատուցում **(Փոփ. կատ. են 26.02.2025թ., N1-02/25/1)**:

Իրավասություններ և պատասխանատվություն

Համալսարանը պարտավոր է ուսանողներին և հասարակությանը պատշաճ ձևով տրամադրել համալսարանում իրականացվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ:

Լրացուցիչ կրթական ծառայություններն իրականացնելու համար ծառայության կազմակերպման համար պատասխանատուների կողմից կազմվում է աշխատանքային պլան, որի համաձայն կազմակերպվում և իրականացվում են այդ ծառայությունները:

Յուրաքանչյուր լրացուցիչ ծառայության կազմակերպման և իրականացման համար պատասխանատու է ծառայությունն իրականացվող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը:

Քաղաքականության իրականացում

Համալսարանում լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացումը պետք է երաշխավորի հասարակության և Համալսարանի ուսանողության կարիքներին համապատասխան մատուցվող ծառայությունների արդյունավետությունը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. Ընթացակարգի նշանակությունը և կիրառման ոլորտը

1.1. Սույն ընթացակարգը սահմանում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման պահանջները և կանոնները:

1.2. Սույն ընթացակարգով սահմանված պահանջները պարտադիր են այն կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կիրառման համար, որոնք առնչություն ունեն լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հետ:

1.3. Նորմատիվային փաստաթղթերն են Համալսարանի կանոնադրությունը, հրատարակչության, լրատվության, տեխնիկական սպասարկման և հասարակայնության հետ կապերի բաժնի, Համալսարանի կարիերայի զարգացման և շարունակական կրթության կենտրոնի և արտաքին կապերի բաժնի կանոնակարգերը:

II. Ընդհանուր դրույթներ

2.1. Համալսարանը մատուցում է լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ Հայաստանի Հանրապետության հասարակության և Համալսարանի ուսումնառողների մոտ կիրառական հմտությունների ձևավորման և զարգացման համար:

2.2. Յուրաքանչյուր լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություն մատուցող կառույց առաջնորդվում է Համալսարանի կողմից հաստատված համապատասխան կանոնակարգով և աշխատանքային պլանով **(Փոփ. կատ. են 26.02.2025թ., N1-02/25/1)**:

2.3. Լրացուցիչ ծառայությունները ուղղված են.

- Հասարակության շրջանում ընդհանուր և մասնագիտական հմտությունների զարգացմանը,
- Լեզվական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը և կատարելագործմանը,
- Ագրարային և ջրային ոլորտների խորհրդատվական աջակցմանը,
- Աշխատանքի տեղավորման տեղեկատվական և խորհրդատվական աջակցմանը:

III. Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների կազմակերպումը և բովանդակությունը

3.1.Լրացուցիչ ծառայությունները ուղղված են հասարակության մասնագիտական պատրաստմանը, վերապատրաստմանը և/կամ որակավորման բարձրացմանը:

3.2.Լրացուցիչ ծառայությունների իրականացումը ենթադրում է.

- մասնագիտական կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստումների կազմակերպում և անցկացում, որակավորման բարձրացում,
- Օտար լեզուների ուսուցմամբ լեզվական հմտությունների զարգացում:,
- Ագրարարային և ջրային ոլորտների խորհրդատվական դաշտի ամրապնդում և զարգացում,

• Աշխատանքի տեղավորմանն ուղղված խորհրդատվության և տեղեկատվության ապահովման համակարգի զարգացում և կատարելագործում:

IV. Տեղեկատվության ապահովում հասարակության շրջանակներում լրացուցիչ կրթական ծառայությունների վերաբերյալ ընթացակարգը

4.1.Համալսարանը հասարակությանը և շահակից կողմերին պարտավոր է տրամադրել տեղեկատվություն իրականացվող լրացուցիչ ծառայությունների վերաբերյալ:

4.2.Տեղեկատվության տրամադրումը իրականացվում է ԶՏՄ-ների, Համալսարանի կայքի (shushitech-com) միջոցով և այլ միջոցներով:

4.3.Կայքում տեղադրվում են նյութեր լրացուցիչ ծառայությունների գործունեության և կանոնակարգող փաստաթղթերի վերաբերյալ:

4.4.Տեղեկատվությունը շահակիցներին տրամադրվում է երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

V.Դասընթացների կամ խորհրդատվության կազմակերպումը և անցկացումը.

5.1.Կախված լրացուցիչ ծառայության ձևից, կազմված աշխատանքային պլանի համաձայն կազմակերպվում են դասընթացներ կամ խորհրդատվություններ:

5.2.Ծառայության իրականացման ժամանակ կիրառվում են դիդակտիկ նյութեր, տրամադրվում են ծառայության մասին բուկլետներ և այլն:

VI. Շահակիցների բավարարվածության և կարիքների ուսումնասիրումը և վերլուծությունը

6.1.Լրացուցիչ ծառայություններն ավարտելուց հետո անցկացվում է սպառողների/շահակիցների բավարարվածության մակարդակի ուսումնասիրություն տարբեր մեխանիզմների և մեթոդների միջոցով:

6.2.Բավարարվածության ուսումնասիրման ձևը որոշում է կոնկրետ ծառայություն մատուցող կառույցը:

6.3.Տվյալ փուլում իրականացվում է շահակիցների լրացուցիչ կրթական ծառայություններից բավարարվածության գնահատում, ինչը որոշում է.

- ծառայության արդյունավետությունը. արդյո՞ք մատուցված ծառայությունը թողնում է դրական ազդեցություն սպառողի մասնագիտական կարողությունների վրա,
- շահակիցների բավարարվածությունը. արդյո՞ք սպառողը բավարարված է ստացված ծառայությունից,
- ծառայության մատուցման համապատասխանությունը պլանավորված միջոցառումներին և ծառայության գործառույթներին:

VII.Գործունեության գնահատումը և բարելավմանը ուղղված պլանների և միջոցառումների մշակումը

7.1.Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գործունեության գնահատման արդյունքների հիման վրա լրացուցիչ ծառայություն մատուցող յուրաքանչյուր կառույց կազմում է հաշվետվություն, որը ներկայացվում է Համալսարանի գիտական խորհրդի նիստերի քննարկմանը:

7.2.Կայացվում են որոշումներ ուղղված՝ բարելավմանը և ուղղիչ գործողությունների պլանների մշակմանը: Դրա նպատակն է կատարելագործել և զարգացնել լրացուցիչ կրթական ծառայությունների դերը Համալսարանում:

VIII. Լրացուցիչ ծառայություններ մատուցող կառույցները

8.1. ՇՏՀ կարիերայի զարգացման և շարունակական կրթության կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն)

- Համալսարանի կարիերայի զարգացման և շարունակական կրթության կենտրոնը գործում է բուհի գիտական խորհրդի կողմից հաստատած կանոնակարգի հիման վրա:
- Կենտրոնի ծառայությունները ուսանողների, շրջանավարտների, գործատուների համար անվճար են:
- Կենտրոնը կապող օղակ է հանդիսանում տեղական, միջազգային կազմակերպությունների, ուսուցման կենտրոնների և համալսարանի միջև:
- Կենտրոնը, անհրաժեշտության դեպքում, ուսանողներին տրամադրում է անհատական խորհրդատվություն, որն իր մեջ ներառում է աշխատանքի որոնման տեխնիկայի ծանոթացում, նախապատրաստում հարցազրույցների, ինչպես նաև ինքնակենսագրական փաստաթղթերի՝ ռեզյումեների, ուղեկից նամակների կազմում և խմբագրում:
- Կենտրոնը բոլոր ֆակուլտետների 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպում է սեմինարներ «Ինչպես կազմել ռեզյումե և ուղեկից նամակ», «Հարցազրույցի արվեստը», «Աշխատանքային օրենսգիրք», «Ղեկավարման ունակությունների զարգացում» և այլ թեմաներով:
- Կենտրոնը կատարում է տարատեսակ հետազոտություններ, օրինակ՝ Համալսարանի շրջանավարտներից գործատուների բավարարվածության գնահատում:
- Կենտրոնը իր բազայում գրանցված ուսանողների և շրջանավարտների էլեկտրոնային հասցեին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում առկա թափուր աշխատատեղերի, վերապատրաստումների և պրակտիկաների վերաբերյալ:

8.2.Գործում է Կենտրոնի ֆեյսբուքյան էջը՝ (**https://www.facebook.com/profile.php?id=100028195819393&mibextid=ZbWKwL**), որտեղ տեղադրված Կենտրոնի ուղղորդմանն և զարգացմանը միտված տեղեկատվությունը հասանելի է բոլոր ցանկացողներին:

8.3. Գործատուները հնարավորություն ունեն իրենց ընկերություններում առկա թափուր աշխատատեղի, պրակտիկայի, վերապատրաստման մասին հայտարարությունները տարածել Կենտրոնի ինտերնետային կայքում տեղադրելու և էլեկտրոնային հասցեներին ուղարկելու միջոցով: Կենտրոնում կատարում են նաև ըստ աշխատանքի նկարագրության հարմար թեկնածուների ընտրություն Համալսարանի շրջանավարտներից և կազմակերպում են հանդիպում /հարցազրույց կազմակերպության ներկայացուցչի հետ ըստ անհրաժեշտության:

8.4. Գործատուները անվճար հիմունքներով մասնակցում են Համալսարանի Կենտրոնի կազմակերպած ամենամյա աշխատանքային տոնավաճառներին:

7.5. Գործընթացների և ծառայությունների արդյունավետությունը գնահատվում է գնահատման հարցաթերթիկների և Կենտրոնի գործունեության գնահատման հարցաթերթիկների միջոցով:

8.6. Կենտրոն կազմակերպում է որակավորման բարձրացման խորհրդատվական դասընթացներ դասախոսական կազմի հետ:

8.7. Դասընթացի ավարտին ունկնդիրներին տրվում է հավաստագիր որակավորման բարձրացման վերաբերյալ:

IX. Արտաքին կապերի բաժին

9.1. Համալսարանի արտաքին կապերի բաժինը իրականացնում է նաև լեզուների ուսուցման լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ:

9..2. Արտաքին կապերի բաժնի մատուցած ծառայություններից կարող են օգտվել հետևյալ Համալսարանի ցանկացած ֆակուլտետի և կուրսի ուսանողներ, մագիստրանտներ, ասպիրանտներ, դասախոսներ, այլ աշխատակիցներ և արտաքին շահակիցներ:

9.3. Բաժնում իրականացվող լեզուների ուսուցման գործընթացը հնարավորություն է տալիս շահակիցներին (սպառողներին) հետագա գործունեության ընթացքում օգտվել անհրաժեշտ մասնագիտական գրականությունից, ինչպես նաև շարունակել ուսուցումը արտերկրի ուսումնական հաստատություններում:

9.4. Համալսարանի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման կանոնակարգը սահմանում է Համալսարանի արտաքին շահակիցների շրջանում հարցումների անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

9.5. Հարցումը կրթական ծրագրերի որակի ապահովման կարևորագույն բաղադրիչ է, որի անցկացման նպատակն է ստանալ տեղեկատվություն Համալսարանի շրջանավարտների մասնագիտական և անձնային կոմպետենցիաների, ընդհանրական կարողությունների և աշխատաշուկայում Համալսարանի շրջանավարտների մրցունակության վերաբերյալ:

9.6. Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով՝ անանուն և թղթային եղանակով (Հավելված 1):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ն.Ա.Միքայելյան**

Գիտական քարտուղար՝ **Լ.Գ.Այդինյան**

Հավելված 1

ՇՏՀ Կարիերայի զարգացման և շարունակական կրթության
Գնահատման հարցաթերթիկ

Սիրելի՛ շրջանավարտ,

այս հարցման նպատակն է՝ բարելավել կրթության որակը մեր համալսարանում: Ձեր անկեղծ պատասխանները կնպաստեն այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկելուն և իրականացնելուն:

Հարցումն անանուն է:

1. Աշխատու՞մ եք արդյոք.

ա/աշխատում եմ՝ իմ մասնագիտությամբ

բ/աշխատում եմ՝ այլ մասնագիտությամբ

գ/չեմ աշխատում

2. Եթե չեք աշխատում, հայտնի՞ է արդյոք, թե ապագայում որտեղ եք աշխատելու.

ա/այո՝ իմ մասնագիտությամբ

բ/ այո՝ մեկ այլ մասնագիտությամբ

գ/ ոչ

Ի.Խնդրում ենք գնահատել կրթական ծրագրերից և ուսումնական գործընթացի կազմակերպումից Ձեր բավարարվածությունը

(գնահատեք 5 բալային սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր գնահատականն է, 1-ը՝ ամենացածր)

1. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է նպաստում մասնագիտական կարողությունների ձեռք բերմանը.

1☐ 2☐ 3☐ 4☐ 5☐

2. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է տալիս տեսական գիտելիքներ.

1☐ 2☐ 3☐ 4☐ 5☐

3. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է տալիս գործնական հմտություններ.

1☐ 2☐ 3☐ 4☐ 5☐

4. Որքանո՞վ է պրակտիկան նպաստել մասնագիտական որակների ձևավորմանը.

1☐ 2☐ 3☐ 4☐ 5☐

5. Ըստ Ձեզ՝ ուսումնառության ընթացքում Ձեր ստացած գնահատականները որքանո՞վ են համապատասխանում Ձեր իրական գիտելիքներին.

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

6. Որքանո՞վ էր օբյեկտիվ ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն. Ավարտական աշխատանքների պաշտպանություն)

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

II. Գնահատեք Համալսարանի ուսումնական ռեսուրսները օժանդակ ծառայությունների աշխատանքը

Ուսումնառության ընթացքում որքանո՞վ եք բավարարված եղել.

1. Լսարանի կահավորանքից.

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

2. Համակարգչային լսարանների կահավորանքից

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

3. Համակարգչային լսարանների մատչելիությունից.

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

4. Համացանցի /ինտեռնետի/ առկայությունից և արագությունից.

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

5. Ուսումնական լաբորատորիաների ապահովվածությունից

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

6. Մասնագիտական գրականության մատչելիությունից /առկայությունը գրադարանում, ամբիոնում, տրամադրումը դասախոսների կողմից/

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

III. Գնահատեք Ձեր բավարարվածությունը Համալսարանի միջավայրից

Ուսումնառության տարիների ընթացքում, Ձեր ուսման ու անձնական հարցերով դուք բազմիցս դիմել եք համապատասխան կառույցներին: Որպես ընդհանուր տպավորություն ու գնահատական՝ որքանո՞վ են Ձեզ բավարարել նրանց վերաբերմունքը.

1. Դեկանատի անձնակազմի

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

2. Դեպարտամենտի (ամբիոն) անձնակազմի

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

3. Ձեզ դասավանդած դասախոսների

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

4. Ուսումնամեթոդական բաժնի անձնակազմի

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

5. Ուսումնական գծով պրոռեկտորի

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

6. Ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով ռեկտորի տեղակալի

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

7. Ուսանողական խորհրդի

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

8. Ուսանողական գիտական ընկերության

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

IV. Կոռուպցիոն դրսևորումները Համալսարանում

1. Ձեր ուսումնառության ընթացքում եղե՞լ են դեպքեր, երբ դուք գումարի դիմաց ստացել եք դրական կամ բարձր գնահատական /քննություն, ստուգարք, կուրսային և այլն/:

1. Այո 2. Ոչ

2. Ձեր ուսումնառության ընթացքում եղե՞լ են դեպքեր, երբ միջնորդությամբ, առանց գումարի /բարեխոսությամբ/ ստացել եք դրական գնահատական /քննություն, ստուգարք, կուրսային և այլն/:

1. Այո 2. Ոչ

3. Ձեր ուսումնառության ընթացքում եղե՞լ են դեպքեր, երբ փոխադարձ համաձայնությամբ վճարի դիմաց դասախոսների հետ մասնավոր պարապմունքներ եք անցկացրել, որպեսզի ստանաք դրական գնահատական /քննություն, ստուգարք, կուրսային և այլն/:

1. Այո 2. Ոչ

V. Համալսարանի ուժեղ և թույլ կողմերի մասին

1. Եթե փորձեք գնահատել Համալսարանում կրթության կազմակերպումը ընդհանուր առումով, ապա գործընթացի ո՞ր ուժեղ կողմերը հատկապես կուզենայիք ընդգծել (նվազագույնը 1 պատասխան):

1) _____

2) _____

3) _____

2. Իսկ ո՞ր թույլ կողմերը կփոխեիք (նվազագույնը 1 պատասխան):

1) _____

2) _____

3) _____

3. Խորհուրդ կտաք Ձեր մերձավորներին / ընկերներին/ սովորել ՇՏՀ-ում.

1. Այո 2. Ոչ

VI. Խնդրում ենք գնահատել Համալսարանի կողմից անցկացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերից Ձեր բավարարվածությունը

1. Ըստ Ձեզ որքանո՞վ է համալսարանի կողմից կազմակերպվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի թեմաները արդիական:

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

2. Ինչպե՞ս եք գնահատում ոչ ֆորմալ կրթական ծրագրերում ներգրաված դասընթացավարների լսարանի հետ աշխատելու և նյութը մատչելի մատուցելու հմտությունները:

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

VII.Այլ տեղեկատվություն

1. Ձեր բնակության վայրը_____
2. Սեռը ա. Արական բ. Իգական
3. Ֆակուլտետը_____

Համալսարանի կարիերայի զարգացման և շարունակական կրթության Շուշիի տեխնոլոգիական համալսարանի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի՛ շահակիցներ, Շուշիի տեխնոլոգիական համալսարանը կարևորում է Ձեր կարծիքը և վստահեցնում, որ Ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու համալսարանի գործունեությունը:

Հետազոտությունն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, իսկ 1-ը ամենացածր գնահատականն է:

Թիվ	Գնահատեք մեր շրջանավարտների.		Գնահատականը
1.	մասնագիտական պատրաստվածություն		
2.	տեսական գիտելիքների իմացություն		
3.	գործնական հմտություններ		
4.	հաղորդակցվելու կարողություններ		
5.	կազմակերպչական կարողություններ		
6.	ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում		
7.	քննադատական – վերլուծական կարողությունները		
8.	տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները		
9.	խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողություններ		
10.	մասնագիտական խոսքը		
11.	վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը		
12.	աշխատանքային պատասխանատվություն		
13.	թիմային աշխատանք կատարելու ունակություններ		
14.	գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողություններ		
15.	ինքնազարգացման ձգտում		
16.	Գնահատեք Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հեղինակությունը	Ձեր կազմակերպությունում	
		տարածաշրջանում	

17. Ձեր կարծիքով Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ի՞նչ նոր մասնագիտության և կամ մասնագիտացման կարիք կա:

18. Որքանո՞վ եք բավարարված գործող կրթական ծրագրերից:

19. Որքանո՞վ են Շուշիի տեխնոլոգիական համալսարանի շրջանավարտների մասնագիտական գիտելիքները մրցունակ աշխատանքի շուկայում:

20. Աշխատանքի ընդունելիս հատկապես ի՞նչն եք կարևորում:

21. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի շրջանավարտների ո՞ր առավելությունները կցանկանայիք ընդգծել:

22. Ձեր առաջարկները:

Ձեր կազմակերպությունում աշխատող Շուշիի տեխնոլոգիական համալսարանի շրջանավարտների քանակը-----
Նրանցից քանի՞սն են աշխատում իրենց մասնագիտությամբ ------
Նրանցից քանի՞սն են աշխատանքի ընդունվել մրցույթով ------

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

ՇՏՀ շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Գնահատումը կատարվում է 5 բալային սանդղակով, որտեղ՝ 5-ը ամենաբարձր գնահատականն է, 4-ը՝ լավ, 3-ը՝ բավարար, 2-ը՝ անբավարար, պատասխան չունենալու դեպքում՝ 0:

Կրթական ծրագրի անվանումը _____

Որակավորման աստիճանը_____

Կազմակերպության անվանումը _____

1	Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի մասնագիտական պատրաստվածությունից՝	
	տեսական գիտելիքների իմացություն	2 3 4 5 0
	գործնական հմտություններ	2 3 4 5 0
	հաղորդակցվելու կարողություն	2 3 4 5 0
	քննադատական-վերլուծական կարողություն	2 3 4 5 0
	մասնագիտական խոսք	2 3 4 5 0
2	Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի համակարգչային տեխնիկայի և կիրառական ծրագրերի անհրաժեշտ իմացությունից	
	2 3 4 5 0	
3	Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի մասնագիտական օտար լեզուների իմացությունից	
	2 3 4 5 0	
4	Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի գործընկերների հետ համագործակցության և թիմային աշխատանքից	
	2 3 4 5 0	
5	Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի էթիկայի նորմերին հետևելուն	
	2 3 4 5 0	
6	Ինչքանո՞վ են ՇՏՀ շրջանավարտի մասնագիտական գիտելիքները մրցունակ աշխատաշուկայում	
	2 3 4 5 0	
7	Ինչ փոփոխություններ կառաջարկեիք կատարել տվյալ կրթական ծրագրում մասնագիտական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ:	